



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29

Հեռ. (010) 778-122

թիվ 9/7 - 1456

«12» 12 2022 թ.

**Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության թիվ 063
մասնագիտական խորհրդի նախագահ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյանին**

Հարգելի՛ պարոն Ավետիսյան

Ուղարկվում է Նելլի Դավիթի Հովսեփյանի՝ «Պետության և իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

Կից՝ կարծիքը՝ «4» թերթից (2 օրինակով) և ատենախոսությունը:

Հարգանքով՝

**Պեպ,
ոստիկանության գնդապետ**
Կատարող՝ Ա. Սաֆարյան (093577589)

Մ. Մուրադյան



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ

Մ. Մուրադյան

« 09 » 12 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝
Նելլի Դավիթի Հովսեփյանի՝ «Պետության և իրավունքի
հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական
ուսմունքներում» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և
պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ղազանջյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Գ. Մ. Խուդոյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Նելլի Դավիթի Հովսեփյանի՝ «Պետության և իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ներկայումս հայ ժողովրդի առջև ծառայած Արցախի հարցի արդարացի կարգավորման և հայոց պետականության անվտանգության ապահովման խնդիրների լուծման ուղիների նախանշման, ազգային արժեհամակարգը անաղարտ պահելու և ժամանակին համահունչ զարգացնելու, ազգի հոգևոր կեցության ինքնաճանաչման, ինքնաբացահայտման և ինքնահաստատման անհրաժեշտությամբ: Բացի այդ, XIX դարում հասարակական-քաղաքական գործընթացներում առանցքային է դառնում մարդը, ամրապնդվում և հիմնավորվում է մարդու իրավունքների ընդլայնման

գիտակցումը: Ընդ որում, ինքնավար կեցությունը և բանականությունը հայտարարվում են բարձրագույն արժեքներ: Կարևորելով հայ քաղաքական և իրավական մտքի պատմության էջերի բազմակողմանի և անաչառ ուսումնասիրությունը, հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված XIX դարում հայ իրավական մշակույթի համատեքստում հասարակական-քաղաքական և իրավական մտքի ձևավորման և զարգացման, «Ազգային Սահմանադրություն Հայոց» Հիմնական օրենքի ազդեցության, հայ աշխարհիկ պետականագիտության ձևավորման, իրավունքի տեսության հիմնախնդիրների վերհանմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասնմեկ ենթագլուխ պարունակող չորս գլուխներից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի գիտական հետազոտության վիճակը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության մեթոդաբանական հիմունքները, աղբյուրագիտական և տեսական հենքը, գործնական-կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «XIX դարում հայ իրավաքաղաքական մտքի ձևավորման պատմական նախադրյալները, առանձնահատկությունները և հիմնական հոսանքները» վերտառությամբ գլխում հեղինակը բացահայտել է Հայաստանի քաղաքական դրությունը տարածաշրջանում և հայ ժողովրդի հասարակական կարգն ու սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը, անդրադարձել է XIX դարի հայ հասարակական-քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական հոսանքների բովանդակային առանձնահատկություններին՝ ազգային ճակատագրի, պետականության վերականգնման և իրավունքի համատեքստում:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Հայ սահմանադրական և պատմաիրավական միտքը XIX դարում» խորագիրը, լուսաբանված են 1960թվականի Սահմանադրության իրավաբանական բովանդակությունը, ինչպես նաև արևմտահայերի ինքնավարության և համայնքի անդամների նվազագույն իրավունքները: Միաժամանակ, հեղինակը իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով Վահան Բաստամյանցի իրավական ուսմունքի բովանդակության էական կողմերին և հայ իրավունքի ու իրավական մտքի հետազոտությանը՝ որպես ինքնուրույն գիտակարգ:

«Հայ աշխարհիկ պետականագիտության ձևավորումը և հայ մտածողների հայեցակարգային մոտեցումները պետության էության և բովանդակության վերաբերյալ» խորագրով երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է հայ մտածողների դիրքորոշումները ապագա հայոց պետականության կառավարման ձևի, պետական իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման հարցերի վերաբերյալ, նաև քննարկել է կառավարման ընդունելի ձևերը՝ իշխանության միասնականության բովանդակային դրսևորմամբ:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «XIX դարի հայ մտածողների իրավական հայացքներն իրավունքի տեսության հիմնական հարցերի և հասարակության իրատապ իրավական հիմնախնդիրների վերաբերյալ» խորագիրը, հեղինակը լուսաբանել է քաղաքական անկախության բացակայության պայմաններում հայ իրավագիտակցության ձևավորման և զարգացման անհրաժեշտության հիմնավորման, բնական և պոզիտիվ իրավունքների էության ու բովանդակության, միջազգային իրավունքի էության, համակարգի, աղբյուրների, հիմնական ինստիտուտների վերաբերյալ հայ մտածողների առաջադեմ հայացքները և հայեցակարգային մոտեցումները:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Վերջինիս շրջանակներում Հեղինակը ուշադրություն է հրավիրում XIX դարում հայ առաջադեմ մտածողների կողմից պետաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ տեսական ուսմունքների ստեղծման փաստին և դրանց հետագա ազդեցությանը: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

2" Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթը: Անհրաժեշտ է նշել, որ «Ազգային սահմանադրություն» կամ «Ազգային կանոնադրություն» եզրույթների տարբերակված ընկալման վերաբերյալ առաջարկող դրույթը, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Այն պայմանավորված է ժամանակին համահունչ «սահմանադրություն» եզրույթի մեկնաբանման առանձնահատկություններով:

3. Թեև աշխատանքն աչքի է ընկնում գրագիտության ընդհանուր պատշաճ մակարդակով, այնուամենայնիվ, ատենախոսության մեջ նկատելի են պատմական աղբյուրների տեքստերի բազմաթիվ ուղղակի մեջբերումներ: Վերջիններս, անշուշտ, ծառայում են հետազոտության խնդիրների լուծմանը, սակայն սահմանված ծավալի շրջանակներում հետազոտվող հիմնախնդիրների վերլուծական բաղադրիչի չափաբաժնի ավելացումը, մեր դիտարկմամբ, ավելի կբարձրացներ աշխատանքի գիտական արժեքը:


Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Պետության և իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնա-

կարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Նելլի Դավիթի Հովսեփյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումնունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Նելլի Դավիթի Հովսեփյանի՝ «Պետության և իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 9-ի նիստում, արձանագրություն թիվ 6 :

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ  Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ  Գ. Գ. Մալխասյան

